

ԲՀԱԳԱՎԱԴԳԻՏԱՆ ԿԱՄ ԵՐԱՆԵԼՈՒ ԵՐԳԸ.

(Շարունակութիւն)

ԺԱ.

Արջունեան խօսեց.

Գերագոյն Հոգու գիտութեան վեհագոյն գաղտնիքը, որ դու ինձ բացատրեցիր իմ փրկութեան համար, փարատեց ինձանից իմ մոլորութիւնները:

Որովհետեւ քնդարձակօրէն լսեցի ես էակներէ ծնունդն ու վախճանը ո՛վ lotus ծաղկի աչքերով Աստուած, և քո անկորնչելի մեծանձնութիւնը:

Բայց ես ցանկանում եմ տեսնել, ո՛վ վեհագոյն տէր, քո անձնաւորութիւնը, այն ձևով որով նկարեցիր դու, ո՛վ մարդկանց գերագոյնը:

Եթէ դու մտածում ես թէ այս տեսիլքը ինձ մատչելի է, ո՛վ Եօգայի տէր, այն ժամանակ ինձ ցոյց տուր քեզ, քո յաւիտենական հոգին:

Կրիսեան խօսեց.

Տէս, ո՛վ Պրիթանյի որդի, տես իմ ձեւերը՝ հարիւրապատիկ ու հազարապատիկ դանազանեալ, երկնային, բազմագոյն ու բազմապիսի:

Տես Ա՛ղիտյաները, Վասուկները, Ռուդրաները, Երկու Աշվինները, Մարուտները. բազմաթիւ անձանօթ այս հրաշալիքները տես:

Ահա իր միութեան մէջ տես այս տիեզերքը շարժական և անշարժ առարկաներով բովանդակուած իմ մարմնի մէջ և ամէն ինչ որ դու տեսնել ես ցանկանում:

Բայց որովհետեւ դու ինձ չես կարող տեսնել քո մարմնաւոր աչքերով, երկնային աչք կը տտմ քեզ, և նայիլ իմ մէջ գերագոյն Եօգային:

Սանջայան խօսեց.

Այսպէս խօսելով մեծ Եօգայի տէր Հարին, ցոյց տուաւ Պրիթանյի որդուն իր փառահեղ վեհագոյն դէմքը:

Լի բազմաթիւ աչքերով ու երեսներով, բազմաթիւ սքանչելի երևոյթներով, բազմաթիւ աստուածային դարդարանքներով, երկնային բազմաթիւ զէնքեր բռնած:

Աստուածային դրամանդներով ու զգեստներով, երկնային բոյրերով անուշաբուրուած, ամէն բանով հրաշալի, շողշողուն, անհուն, երեսն ամենուրեք:

Եթէ երկնքում յանկարծ ցոլանար հազար արեգակներ ընցափայլութիւնը, կարելի կը լինէր համեմատել այս մեծանձն Աստուծոյ ընցափայլութեան հետ:

Այնպէս Պանդուխ որդին տեսաւ տիեզերքն ամբողջ և միակ ու բազմապատիկ Աստուածներ ի Աստուծոյ մարմնում:

Եւ այն ժամանակ սարսափահար, մազերը կանգնած, հսկան ծռեց իր գլուխը և ձեռքերը միացնելով՝ խօսեց Աստուծուն:

Արջունան խօսեց.

Տեսնում եմ բոլոր աստուածներին քո մարմնի մէջ, ո՛վ Աստուած, ու կենդանի էակների խմբերը, ու Բրահմա Աստուծուն՝ նստած lotus ծաղկի վերայ, ու բոլոր Իմաստուններին ու բոլոր երկնային վիշապներին:

Քո բազմաթիւ բազուկներով, կրծքերով, երեսներով ու աչքերով տեսնում եմ քեզ բոլորովին անհուն երևոյթներով, ոչ վերջ, ոչ միջոց և ոչ սկիզբն եմ տեսնում, ո՛վ տիեզերական տէր, ո՛վ տիեզերական երևոյթ:

Դու կրում ես խոյրը, լալտը, մկունդը; ո՛վ լուսոյ լեռ՝ ամբողջովին շողշողուն. հազիւ կարողանում եմ քեզ տեսնել ամբողջապէս, որովհետեւ դու փայլում ես կրակի ու արեգական պէս քո անհունութեան մէջ:

Դու Անբաժանելին, դերագոյն Լմբոնելին ես. դու այս տիեզերքի դերագոյն գանձարանն ես. դու անկորնչելին, Օրէնքն անխախտ պահողն ես. դու յաւիտենական Առնական ուժն ես:

Անսկիզբ, անմիջոց և անվերջ, անվախճան զօրութեամբ, անսահման բազուկներով, հայեացքդ նման Լուսնի ու Արեգական, ես տեսնում եմ քեզ. քո բերանը նուիրական Կրակի փայլն ունի, քո ջերմութեամբ տաքանում է այս տիեզերքը:

Երկնքի և երկրի միջոցը ու բոլոր սահմանները հասնում ես դու մէն մենակ. տեսնելով քո այս գերբնական ու զարհուրելի երևոյթը երեք աշխարհները գղրդում են, ո՛վ մեծանձն Աստուած:

Ահա աստուածային էակների խումբը քեզ է դիմում. ոմանք երկիւղից ձեռները միացրած աղօթում են լուռ. «Սուտսաի» դռնում են Մեծ Իմաստուններն ու սրբերի խումբերը և օրհնաբանում են քեզ վեհ օրհներգներով:

Ռուսերաները, Ադիտիաները, Վասուկները, Սադիաները, Վիշվաները, երկու Աշվինները, Մարուտաները, Ուշմապաները, Գանդհարւաների, Նաղշաների, Ասուրաների ու Սիդդհաների խմբերը նայում են քեզ, և սարսափում են բոլորը:

Այդ մեծ երևոյթը՝ բազմաթիւ բերաններով ու աչքերով, բազմաթիւ բազուկներով, սրունքներով ու ոտներով, բազմաթիւ կրծքերով, բազմաթիւ ահարկու ատամներով՝ տեսնում են աշխարհներն ու զարհուրում, ու ես ևս:

Երբ Քեզ տեսնում եմ ամպածրար, բազմաթիւ գոյներով երփներանգ, բերանաբաց ու կայծակնացայտ աչքերով, ցնցւում է հոգիս ու չեմ գտնում իմ հանդիսան ու դադարը, ո՛վ Վիշնու:

Երբ տեսնում եմ քո կերպարանքը սպառնալից ատամներով ու նման աշխարհաբորբոք հրդեհին, էլ բոլորտիքս չեմ տեսնում ու իմ ուրախութիւնը հեռանում է. օդնի՛ր ինձ, ո՛վ Աստուածների տէրը, ո՛վ Աշխարհների ընաղարանը:

Բոլոր այս Դհրաարանշարայի որդիները իշխանների բանակներով, Բհիշման, Դհրոնան ու այս կառապանի որդին մեր զինուորների զօրապետների հետ,

Գնում են դահավիժուէլ քո զարհուրելի, քո սպառնալից ատամներով զինուած բերնի մէջ. ոմանք ջարդուած գլուխներով առկախ մնում են ատամներիդ մէջտեղ:

Ինչպէս ջրերի բազմաթիւ հեղեղները Ովիկանն են դիմում ուղղակի, այնպէս այս հսկաները տարւում են դէպի քո կայծակնացայտ կերպարանքը:

Ինչպէս դէպի հրավառ բոցն է թռչում թիթեռը յարածուն արագութեամբ՝ մահանալու համար, այնպէս արագ վազում են էակները քո բերանում կորչելու համար:

Ուտսւմ է քո լեզուն ամբողջ աշխարհները և քո բոցավառ կոկորդը կլանում է նրանց. քո լոյսով լցնում ես ամբողջ տիեզերքը և քո ճառագայթները տաքացնում են նրան, ո՛վ Վիշնու:

Պատմի՛ր ինձ, ո՛վ ես դու, ո՛վ ահեղ երևոյթ. օրհնութիւն քեզ, ո՛վ դերագոյն Աստուած. օդնի՛ր ինձ, ես ցանկանում եմ իմանալ քո սկզբնական էութիւնը, որովհետեւ ես չեմ նախատեսում քո ընթացքը:

Կրիշնան խօսեց.

Ես ժամանակն եմ աշխարհակործան. ծերացած եկել եմ ես աշխարհները ջնջելու. բացի քեզանից չալիտի մնայ ոչ ոք այս երկու բանակների զինուորներից:

Ուստի վե՛ր կաց, փա՛ռք որո՛նիր, յաղթահարե՛ր թշնամի-
ներիդ և ձեռք բեր ընդարձակ տէրութիւնը. ես վճռել եմ
նրանց կորուստը. դու եղի՛ր միայն իմ գործիքը:

Դրո՛նային, Բհիշմային, Ջայադրաթային, Վարնային և ու-
րիշ պատերազմիկներին ես զրկել եմ կեանքից. սպանե՛ր նրանց,
մի՛ խռովիր. կռուե՛ր և դու պիտի յաղթես քո սսոխներին:

Սանջայան խօսեց.

Երբ լսեց դանդրահեր Աստուծու այս խօսքերը, ձեռքերը
միացրած, թադակիւր մարտիկը երկրպագեց երկիւղածու-
թեամբ Կրիշնային և այսպէս առաց նրան՝ դողդոջուն, զար-
հուրած ու փսփսալով:

Արջունան խօսեց.

Այո՛, ո՛վ դանդրահեր Աստուծա՛, քո անունով աշխարհն
հրճւում է և հպատակում. Ռաիշաները սարսափահար փախ-
չում են. բոլոր Սիդդհաների խմբերը երկրպագում են:

Եւ ինչո՞ւ չպաշտէին քեզ, ո՛վ մեծանձն, քե՛զ՝ աւելի
յարգելի քան Բրահմանը, առաջին արարիչ, անվախճան, Աս-
տուածներին տէր, Աշխարհի բնակարանը, քե՛զ անբաժանելի
աղբիւր էութեան և անէութեան:

Դու առաջին աստուածութիւնն ես, առաջին առնա-
կան ոյժը, դու այս տիեզերքի դերադոյն դանձարանը. դու
գիտունն ես, դու գիտութեան առարկան ես, դերադոյն
բնակարանն ես. քեզնից է այս Տիեզերքը, ո՛վ անհունակերպ
Աստուծա՛:

Դու ես Վայուն, Եաման, նուիրական հուրը, Վարու-
նան, Վուսինը. դու Արարչապետ և նախահայր. փա՛ռք, փա՛ռք
քեզ հազարապատիկ, և դարձեալ կրկին փա՛ռք, փա՛ռք քեզ:

Փա՛ռք քո ներկայութեան և քո յետևից, փառք քեզ ա-
մենայն տեղ, ո՛վ Տիեզերական. անհուն զօրութեամբ և ան-
սահման կարողութեամբ դու տիեզերքն ընդգրկում ես. դու
տիեզերական ես:

Եթէ քեզ կանչել եմ այսպէս ասելով. «էյ, Կրիշնա, էյ
Եանդուի որդի, էյ բարեկամ», եթէ չեմ ճանաչել քո վեհա-
փառութիւնը յանդգնութեամբ կամ նախանձով,

Եթէ բարկացրել եմ քեզ խաղալիս, պտոյտում, պառ-
կած, նստած կամ ուտելիս, մենակ կամ այս պատերազմիկ-
ներին առաջ, ներկիւր ինձ, ո՛վ անսահման Աստուծա՛:

Դու Հայրն ես աշխարհի, շարժական և անշարժ առար-
կաների, դու աւելի պատուական ես քան հոգեւոր ուսու-

ցիշք. ոչ ոք չկայ քեզ հաւասար. ո՞վ կարող է գերադանցել քեզ երեք աշխարհներում, ո՞վ անսահման Վեհափառութիւն:

Ուստի խոնարհելով ու երկրպագելով քո առաջ, ես քո շնորհն եմ աղերսում, ինչպէս հայրը որդուն, ինչպէս բարեկամը բարեկամին, սիրահարը սիրուհուն, այնպէս օգնի՛ր ինձ, ո՞վ Աստուած, ո՞վ Օրհնեալդ:

Անտեսանելուդ տեսնելով՝ ես հրճուել եմ, բայց երկիւղով սարսափում է միտքս, ցոյց տուր ինձ, ո՞վ Աստուած, քո առաջին երեոյթը. օգնի՛ր ինձ, ո՞վ Աստուածների տէրը, ո՞վ աշխարհի բնակարանը:

Խոյրով, լախտով ու մկունդով ուղում եմ տեսնել քեզ նորից. վերստացի՛ր քո չորեքթեան կերպարանքը, ո՞վ բաղմարադուկ ու բաղմաձէ Աստուած:

Կրիեման խօսեց.

Իմ շնորհիւն է, ո՞վ Արջունա և Եօգայի զօրութեամբ, որ դու տեսար իմ գերագոյն կերպարանքը, շողշողուն, տիեզերական, անսահման ու սկզբնական, որ ոչ ոք քեզանից առաջ չէր տեսել:

Ոչ Վէդան, ոչ Զոհր, ոչ Ընթերցումը, ոչ ողորմութիւնը, ոչ արարողութիւնները, ոչ խիստ ճգնութիւնները, չէին կարող ինձ տեսանելի ընծայել աշխարհում ոչ մէկին բացի քեզանից, ո՞վ Կուրուի որդի:

Մի՛ վախենար, մի՛ յուղուի՛ր տեսնելով իմ այս սոսկալի կերպարանքը, աներկիւղ ու զուարթ՝ դու նորից իմ առաջին կերպարանքը պիտի տեսնես:

Սանջայան խօսեց.

Այսպէս խօսելով Վաճսուդէյիան ցոյց տուաւ Արջունային իւր միւս կերպարանքը, և հանդստացրեց նորա երկիւղը՝ նորից երեւելով իր սովորական կերպարանքով:

Արջունան խօսեց.

Տեսնելով այժմ քո մարդկային անխռով կերպարանքը, նորից ինձ դանում եմ և մանում բնական ընթացքի մէջ:

Կրիեման խօսեց.

Իմ այս դժուար տեսանելի կերպարանքը, որ տեսար դու, աստուածներն անդամ անդադար ցանկանում են տեսնել:

Բայց ոչ վեդաներով, ոչ ճգնութեամբ, ոչ ողորմածութեամբ և ոչ զոհերով տեսանելի չեմ դառնում. ես այնպէս՝ ինչպէս տեսար դու:

Անվերջ պաշտումով միայն, ով Արջունա, կարելի է ճանաչել ինձ այս ձևով, տեսնել իմ էությունը, թափանցել իմ մեջ:

Ով գործում է ինձ համար, իմ գերագոյնն է ճանաչում, ինձ է պաշտում միայն, ով շունի ցանկութիւն կամ ատելութիւն դէպի կենդանի էակները, նա դալիս է ինձ մօտ:

Այսեղ վերջանում է Բհագավադգիտի ռասնրսկերորդ գլուխը, որի անունն է Տիեզերական կերպարանի տեսիլք:

Շարունակելի

Թարգ. Հ. Անառեան



Գ Ր Ա ի Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

I

Մկրտութիւն Հայոց, Վրաց, Սրխաղաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, ի ուսւ հրատարակութենէ, կատարելոյ ըստ արարելէն սրինակի յուսուցչապետ Նիկողայոսէ Մառ. Թարգմանեաց ի հայ միաբան Ս. Էջմիածնի Յուսիկ արքեպիսկոպոս (արտասպեալ յԱրարատ ամսագրէ) ի Վաղարշապատ, ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի 1911.

Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցը, որի պատմութիւնը դեռ չէ գրուած, մեր վանական դպրոցներէից միակն էր, որ իւր գոյութիւնը շարունակեց մինչև 80 ական թուականը փոխուելով ձեւարանի, ժառանգաւորաց դպրոցից են դուրս եկել մեր անցեալ դարու աչքի ընկնող հոգեւոր դրական անձինքն, այդ դպրոցի վերջին շրջանից են այժմեան միաբանութեան անագամներ Յուսիկ արքեպիսկոպոսը, Բարդուղիմէոս եպիսկոպոսը և Սահակ վարդապետ Ամատունին:

Գերապատիւ Յուսիկ արքեպիսկոպոսի աշխատութիւններից նշանաւոր է «Հայաստանեայց առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւնը», որ երկար ժամանակ մեր դպրոցներիում իբրև դասագիրք գործ է ածուել, իսկ նորա կրօնի դասագրքերը Ա. Բ. Գ. տարիների համար կրկին տպագրութեամբ է լոյս տեսել: Ապա նա հրատարակել է «Սի-